ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՊՏՈՒՏԱՅԻՆ ԿՈՆՑԵՊՑԻԱՅԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

Հ. Գ. ԱՍԼԱՆՅԱՆ

ՍՄԿՊ XXII համագումարի նյութերում ու որոշումներում, մեր ժամանակների ստեղծագործական մարքսիզմի մեծագույն փաստաթղթում՝ պարտիայի նոր Ծրագրում վառ կերպով ցույց են տրված երկու սիստեմների՝ սոցիալիստական և կապիտալիստական համաշխարհային սիստեմների գաղափարական պայքարի սրումը, սոցիալիստական գաղափարախոսության համաշխարհային-պատմական հաղթանակները և բուրժուական գաղափարախոսության խոր ճգնաժամը։

Պարտիայի Ծրագրում ասված է. «Արդի աշխարհում կատաղի պայքար է գնում երկու գաղափարախոսությունների՝ կոմունիստական և բուրժուական գաղափարախոսությունների միջև։ Այդ պայքարը կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու պատմական պրոցեսի արտացոլումն է մարդկության հոգևոր կյանքում։ Պատմական նոր դարաշրջանը իսկական հաղթանակ բերեց պրոլետարիատի ռևոլյուցիոն աշխարհայացքին։ *Մարքսիզմ-լենինիզմը դարձել է առաջավոր մարդկության մտքերի տիրակալը։ Բուրժուական ուսմունքները և դպրոցները չդիմացան պատմական ստուգմանը։ Նրանք չկարողացան և չեն կարող գիտական պատասխան տալ կյանքի առաջ քաշած հարցերին։ Բուրժուազիան այլևս ի վիճակի չէ այնպիսի գաղափարներ առաջ քաշել, որոնք կարողանային ժողովրդական մասսաներին տանել իրենց հետևից։ Կապիտալիստական երկրներում ավելի ու ավելի մեծ թվով մարդիկ են իրենց կապերը խզում բուրժուական աշխարհայացքի հետ։* Բուրժուական գաղափարախոսությունը խոր ճգնաժամ է ապրում»[1]։

Այս բնութագրությունը վերաբերում է բուրժուական գաղափարախոսության բոլոր բնագավառներին՝ փիլիսոփայությանը, տնտեսագիտությանը, պատմագրությանը, սոցիոլոգիային, էսթետիկային, հոգեբանությանը և այլն և, ամենից առաջ՝ պատմափիլիսոփայությանը։ Սա բնորոշ է. պատմափիլիսոփայության մեջ, ասես ֆոկուսի մեջ, խտացած դրսևորվում են բուրժուական մտքի սնանկության բոլոր ախտանիշները՝ դեգրադացիա, տարընթացություն, սոցիալական հոռետեսություն, իռացիոնալիզմ։ Սա հասկանալի է. պատմափիլիսոփայությունը հասարակական մտքի մի այնպիսի ընդհանրացնող բնագավառ է, որտեղ տարբեր դասակարգեր, պարտիաներ ու գործիչներ որոնում են պատմության ընթացքի արմատական հարցերի պատասխանը՝ հասարակության զարգացման, ամբողջ պատմական պրոցեսի բովանդակության, շար-

---

[1] *Սովետական Միության Կոմունիստական պարտիայի ծրագիրը, էջ 60։*

Ժիչ ուժերի, զարգացման ընդհանուր ուղղության, վերելքների ու վայրէջքների, առաջադիմության կամ հետադիմության պրոբլեմներին վերաբերող պատասխանները։ Այստեղ բուրժուական մտքի անզորությունը հանդես է գալիս հատուկ ցայտունությամբ։ Իմպերիալիզմի գաղափարախոսները անկարող են լրջմիտ, ռացիոնալ կերպով պատասխանելու այն հարցերին, թե ինչո՞ւ և ինչպե՞ս ստեղծվեց և հաղթականորեն առաջ է ընթանում սոցիալիզմի համաշխարհային սիստեմը, ո՞րն է իմպերիալիզմի գաղութային սիստեմի փլուզման պատճառը, ի՞նչ դեր են խաղում ժողովուրդները արդի պատմության մեջ, ո՞ւր է տանում տեխնիկայի զարգացումը, մինչդեռ սրանք մեր դարաշրջանի մեծագույն պրոցեսներն են։ Հիասթափությունը ներկայից, վախը ապագայի նկատմամբ, սոցիալական վհատությունը, բանականության ու գիտության սկզբունքներից հրաժարվելը և կրոնական սիստեմներին ապավինելը—ահա իր մայրամուտի պրոցեսն ապրող իմպերիալիզմի գաղափարական ճգնաժամի մի քանի բնորոշ գծերը։ Իհարկե, գաղափարական ճգնաժամը երկնքից վայր չի ընկնում, դա այլ բան չէ, քան կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի արտացոլումը այդ սիստեմների պաշտպանների գիտակցության մեջ, ճգնաժամ, որը մտել է իր երրորդ էտապը։

Երկու ձևով է դրսևորվում այդ ճգնաժամը (խոսքը գաղափարական ճգնաժամի մասին է)։ մի կողմից հակակոմունիզմը, կեղծիքն ու զրպարտանքը սոցիալիստական սիստեմի, նրա քաղաքականության, մարքս-լենինյան իդեոլոգիայի հասցեին, ինչպես և դեմոկրատական ու գաղութային ժողովուրդների ազատագրական շարժման հասցեին։ Հակակոմունիզմը իմպերիալիզմի գլխավոր քաղաքական ու իդեական զենքն է, կոմունիզմի հասցեին արված զրպարտանքի հետ միասին հակակոմունիզմը իմպերիալիզմի անզուսպ ջատագովությունն է։ Այս հողի վրա են ստեղծված «ժողովրդական կապիտալիզմի», «տեխնոկրատիայի», դասակարգային պայքարի մարման և այլ կեղծ տեսությունները։ Մյուս կողմից, դոգերումներ, տարընթացություն, նիհիլիզմ, համաշխարհային քաղաքակրթության կատաստրոֆիկ կործանման անխուսափելիության վերաբերյալ վայնասուններ, սոցիալական խոր պեսիմիզմ և այլն։ Հորինվում են պատմության ընթացքի, նրա անցյալի, ներկայի, ապագայի վերաբերյալ բազմապիսի, հաճախ իրարամերժ, խախուտ կոնցեպցիաներ, նպատակ ունենալով դրանք հակադրել մարքսիզմ-լենինիզմի պատմափիլիսոփայությանը, վարկաբեկել հասարակական առաջադիմության, իսկ դրա հետ միասին՝ նաև կոմունիզմի գաղափարը։ Այս է հարցի էությունը։

Ահա այդպիսի մոդայական, բուրժուական երկրներում շատ տարածված կոնցեպցիաներից է պատմության շրջապտուտային (ցիկլային) կոնցեպցիան։ Սա շատ հնադարյան և հնամաշ պատմափիլիսոփայություն է, բայց բուրժուական գաղափարախոսները շատ հաճախ են անդրադառնում դրան և այժմ այն վերականգնում են զանազան ձևերով ու վարիանտներով։ Հսկայական գրականություն է ստեղծված, և այժմ էլ շարունակում է ստեղծվել այդ հարցի շուրջը։

Հասարակական առաջադիմության (պրոգրեսի) գաղափարի պատմությամբ զբաղվող բուրժուական մի շարք պատմաբաններ ու սոցիոլոգներ ձգտելով վարկաբեկել այդ գաղափարը, հարցի պատմությունն այնպես են ներկայացնում, թե իբր միայն շրջապտուտային կոնցեպցիան է համապատասխանում

պատմության տրադիցիաներին, իսկ առաջադիմության (պրոգրեսի) գաղափարը պատահական գաղափար է, այն հիմքեր չունի, առաջ է քաշվել միայն վերջին դարերում և գիտականորեն չի հիմնավորվել։ Այս տեսակետը պարզապես հակասում է պատմական իրականությանը. բուրժուական շատ պատմաբաններ, ընդհակառակը, գտնում են, որ առաջադիմության գաղափարը կալիս է շատ հնից։ Սակայն ներկա հոդվածում մենք հարցի պատմությամբ զբաղվել չենք կարող, դա մեզ շատ հեռու կտանի։ Մի կողմ թողնելով այդ հարցը, այստեղ մենք կփորձենք քննականորեն ուրվագծել շրջապտուտային կոնցեպցիայի դրսևորումները իմպերիալիզմի մի քանի ճանաչված գաղափարախոսների մոտ, նշելով դրանից արվող քաղաքական եզրակացությունները և այդ կոնցեպցիայի անհիմնությունը։ Այստեղ առաջին հերթին պետք է հիշատակվեն իմպերիալիզմի այնպիսի պաշտպաններ ու ջատագովներ և սոցիալիզմի մոլի հակառակորդներ, ինչպիսիք են Ֆր. Նիցշեն, Օս. Շպենգլերը, Ա. Թոյնբին և ուրիշներ։

Պատմության իբրև թե շրջապտուտային բնույթի միտքը, որով ներթափանցված են ժամանակակից բուրժուական շատ սոցիոլոգների գործերը, համառոտակի կարելի է բնութագրել այսպես. մարդկության, քաղաքակրթության, կուլտուրայի պատմությունը գոյանում է տեղով ու ժամանակով ներփակ շրջաններից, քաղաքակրթություններից. յուրաքանչյուր այդպիսի շրջան ունի իր ծագումը, ծաղկումը, կործանումը, որից հետո նոր շրջան է սկսվում, անցնելով նույն փուլերը։ Այդ կոնցեպցիայի համաձայն ժողովուրդների կյանքում պարբերաբար տեղի է ունենում վերադարձ դեպի անցած փուլերը։ Այդպիսի հիմնական փուլեր բուրժուական գաղափարախոսները համարում են նախնադարյան, ֆեոդալական ու բուրժուական քաղաքակրթությունները։ Հասարակական առաջադիմության նոր, ավելի բարձր փուլ, օրինակ՝ կոմունիզմը, կտրականապես մերժվում է։ Ըստ այդ հայացքի, մարդկությունը դատապարտված է շարունակ պատվելու շահագործողական հասարակարգերի շրջանակներում, ինչպես սկզբում՝ անիվում։ Այս ընդհանուր սխեման, սակայն, զանազան վարիանտներով է հանդես գալիս։ Համառոտակի ծանոթանանք դրանցից մի քանիսին։

Իմպերիալիզմի վաղ գաղափարախոսներից մեկը՝ գերմանական փիլիսոփա Ֆրիդրիխ Նիցշեն է, որի փիլիսոփայության հիմնական դրույթներից մեկը, այսպես կոչված, «մշտնջենական վերադարձի» սկզբունքն է։ Այդ փիլիսոփայի կողմից վերոհիշյալ սկզբունքը հռչակված է անգամ «տիեզերական օրենք», որի հայտնագործումն, իբր, իրեն է պատկանում։ Այդ «տիեզերական հայտնագործության» համաձայն տիեզերքն իր էվոլյուցիայի մեջ պարբերաբար կրկնում է անցած փուլերը, ձևերն ու ստրուկտուրաները, որոնք այժմ կան և անցյալում մի քանի անգամ կրկնվել են։ «Հավիտենական վերադարձ»—այսպես է անվանում Նիցշեն տիեզերքի այդ օրենքը։ Նա փորձում է այդ օրենքը տարածել մարդկության զարգացման պատմական պրոցեսի վրա և դրանով իսկ որոշել ժողովուրդների ապագա ճակատագիրը, որոնցից, իբր, սպասում է վերադարձ՝ դեպի կյանքի անցած ձևերը։ Մա դդ, մելամաղձոտ, բացականչում է Նիցշեն, թե կյանքը ավազի ժամացույցի նման պետք է ընթանա հավիտենական ու մշտնջենապես կրկնվող շրջապտույտի մեջ։ Նիցշեի փիլիսոփայության մեջ դրսևորվել են բուրժուական մտքի ճգնաժամի, սոցիալական պեսիմիզմի առաջին նշանները։ Չմոռանանք, որ խոսքը վերաբերում է անցյալ դարի վերջին տասնամյակներին (1880—1890-ական թթ.), երբ բանվորական սոցիալիստա-

կան շարժումը տարածվում էր լայնությամբ ու խորությամբ, իսկ դրա հետ միասին մարքսիզմը իր ռևոլյուցիոն գաղափարներով դառնում էր միջազգային բանվորական շարժման ճանաչված գաղափարախոսություն, կապիտալիզմը թևակոխում էր իր վերջին, իմպերիալիստական փուլը, բուրժուական պրոգրեսը դրսևորում էր իր սահմանափակությունը։ Դա կապիտալիզմի քայքայման սկիզբն էր։

Պատմության շրջապտուտային կոնցեպցիան յուրահատուկ ձևով է հանդես գալիս գերմանական իմպերիալիզմի մյուս գաղափարախոսի՝ Օսվալդ Շպենգլերի գործերում։ Առաջին համաշխարհային պատերազմը և դրան հաջորդող Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը նշանավորեցին կապիտալիզմի համաշխարհային սիստեմի խոր ճգնաժամի առաջին էտապը։ Եվ դարձյալ մենք տեսնում ենք բուրժուական գաղափարախոսների մոտ ցայտուն կերպով արտահայտված սոցիալական պեսիմիզմի մտայնությունը, կապիտալիզմի մայրամուտի մոտիկ լինելը։ Այդ մտայնությունը ամենից ցայտուն արտահայտված է Շպենգլերի՝ «Եվրոպայի մայրամուտը» երկու հատորանոց աշխատության մեջ (1920)։ Նա զգում է կապիտալիզմի մոտալուտ մայրամուտը, բայց բնորոշ է, որ այն ներկայացնում է որպես համաշխարհային քաղաքակրթության ճակատագրական կործանում։ Այս ռեակցիոն «մարգարեությունը» հիմնավորելու համար նա հորինել է, այսպես կոչված, «լոկալ կուլտուրաների» շինծու տեսությունը, որն ամբողջապես ուղղված է բանվորական ռևոլյուցիոն շարժման, սոցիալիզմի ու մարքսիզմի դեմ։ Ըստ այդ տեսության, պատմությունը առաջընթաց ոգով զարգացող պրոցես չէ, այլ տեղով ու ժամանակով սահմանափակված, մեկուսացած կուլտուրաների ծագման ու կործանման պրոցես. այդ կուլտուրաներից յուրաքանչյուրը, օրգանական կյանքի նմանողությամբ, առաջանում է, աճում, կործանվում և քայքայվում։ Այժմ, նրա ասելով, հասել է Արևմուտքի կուլտուրայի կործանման դարաշրջանը։ Անցյալի կուլտուրաների մահացման վերաբերյալ իր այս բոնապրոսիկ սխեման (պատմության մեջ Շպենգլերը ընդունում է ութ «լոկալ կուլտուրաներ») նա ավարտում է հետևյալ հավակնոտ եզրակացությամբ. «Այս է պատմության մեջ եղած բոլոր կործանումների իմաստը, որոնց թվին է պատկանում մեր առաջ ամենահստակ կերպով պատկերվող «անտիկ աշխարհի անկումը», և մենք այսօր մեր շուրջը որոշակի զգում ենք հենց մեզ վերաբերող և իր ընթացքով ու տեղությամբ առաջինի հետ նույնական իրադարձության առաջին նշանները, իրադարձություն, որը կլցնի մերձավորագույն հազարամյակի առաջին դարերը, և որը կլինի «արևմուտքի անկումը»[2]։ Այդ կործանումը, հեղինակի կարծիքով, ճակատագրի զորությամբ կվիճակվի ամբողջ արևմուտքին։ Պարզվում է, որ Շպենգլերին արդեն հայտնի է նույնիսկ այդ կործանման ճիշտ ժամկետը. դա տեղի կունենա 2000 թ. մոտերքը։ Հարկ չկա մանրամասն հերքելու այս մոայլ մարգարեությունը, այն ամեն օր հերքվում է սոցիալիզմի համաշխարհային սիստեմի հաղթական առաջադիմությամբ։ Ճշմարտության հատիկը Շպենգլերի ասածների մեջ այն է, որ իր դարն ապրել է և իրոք իր մայրամուտն է ապրում կապիտալիստական սիստեմը և՛ արևմուտքում, և՛ արևելքում։ Լենինը խորապես բացահայտել է շպենգլերականության սոցիա-

[2] Осв. Шпенглер, Закат Европы, т. I, 1923, էջ 119.

լական իմաստը, ասելով, որ դա համաշխարհային բուրժուազիայի անկման պատմության մի էպիզոդի գաղափարական արտահայտությունն է։ Միշտ այդպես է լինում. անցյալում կործանվող ստրկատիրության, հետագայում իր մայրամուտն ապրող արիստոկրատիայի գաղափարախոսներն իրենց դասակարգի անկումը միշտ էլ փորձել են ներկայացնել որպես ամբողջ մարդկության կործանում։

Եվ ահա մեր օրերում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ համաշխարհային բուրժուազիայի անկումը ոչ թե մի էպիզոդ է, այլ վիթխարի մասշտաբներով կատարվող պրոցես, կրկին վերականգնվում են գիտության ու պատմության կողմից հերքված մշտնջենական վերադարձի, «լոկալ քաղաքակրթությունների» հակապրոգրեսիստական կոնցեպցիաները։ Այստեղ բեմ են դուրս գալիս բուրժուական մտքի այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք են Պ. Սորոկինը, Ն. Բերդյաևը, Ա. Թոյնբին։ Այստեղ կարելի է ավելացնել այդ կոնցեպցիան տարբեր ձևերով ներկայացնող նաև մի շարք այլ մտածողների, ինչպիսիք են Վ. Շուբարտը, ամերիկյան պրոֆեսորներ Էռագոնը, Կ. Ռայթը, Ռ. Զայդենբերգը, գերմանական տնտեսագետ Է. Վագեմանը և շատ ուրիշներ։ Կանգ առնենք սրանցից մի քանիսի վրա։

Ամերիկյան պատմաբան Էռագոնը պատմաբանական ասոցիացիայի սեսիայում (1951) ժխտելով հասարակական առաջադիմության գաղափարը, ուտոպիա հայտարարելով հասարակության կոմունիստական վերափոխության իդեալներն ու ծրագիրը, այն միտքն է պաշտպանում, թե իբր պատմությունը գնում է ցիկլերի ձևով. նրա հավաստիացման համաձայն, կապիտալիզմով ավարտվում է պատմության բարձրագույն ստադիան, և հետագայում համաշխարհային քաղաքակրթությանը սպառնում է անկում ու վերադարձ դեպի անցած էտապները։ Նույն կոնցեպցիայի մի այլ վարիանտն է պրոպագանդում պրոֆեսոր Կ. Ռայթը։ Նրա «Պատերազմի հետազոտություն» գրքում պատմությունը պատկերված է քաղաքակրթության ցիկլերի հետևյալ սխեմայով.

1. Հերոսական դարաշրջան,

2. Կոնֆլիկտների («հավասարակշռության խախտման», «խառը ժամանակների») դարաշրջան,

3. Հավասարակշռության վերականգնման դարաշրջան։

Այս վերջինը, ըստ հեղինակի, ոչ այլ ինչ է, քան կապիտալիզմը, որի կործանմանը հաջորդելու է ոչ թե քաղաքակրթության ավելի բարձր ստադիա, այլ անկում և վերադարձ դեպի անցյալ ցիկլերը։ Նրա պատկերացմամբ, այդպիսի կրիտիկական մոմենտներին որպես թե տիրող դասակարգերը հեռանում են դեպի արվեստ, ստորադրյալ դասակարգերը՝ դեպի նոր կրոնական հավատ։ Առաջանում է նոր սոցիալական իդեալ, սկսվում է քաղաքակրթության նոր ցիկլ, շրջապտույտը կրկնվում է։ Այդպիսով, հասարակությունը շարունակ պտտվում է ֆեոդալիզմի և կապիտալիզմի ներփակ շրջանակում։ Այս սխեմայի մեջ տեղ են գտել ինչպես Նիցշեի, նուլնոլես և «լոկալ կուլտուրաների» տեսության տարրերը։ Ենթադրվում է, որ պատմաբան Ռայթը ոչ միայն ժխտում է առաջադիմության գաղափարը, այլև հետադարձության (ռեգրեսի) տեսությունը։ Նա ընդհանրապես գտնում է, որ պատմությունը որևէ ուղղությամբ չի գնում՝ առաջընթաց կամ վարընթաց, այլ ներկայացնում է դեպքերի, իրադարձությունների պատահական կուտակում, որտեղ որևէ օրինաչափություն գոյություն

չունի, որեմն և մերժվում է պատմության առաջընթաց զարգացումը դեպի կոմունիզմ։

Սոցիալական առաջադիմության հակառակորդների շրջանում գաղափարական տարաբնթացությունը անպայման ամենաբնորոշ երևույթներից մեկն է. հիասթափվելով մի մտացածին կոնցեպցիայից, նրանք այն դեն են նետում և դիմում մի այլ, նման կոնցեպցիայի։ Ամերիկանացած գերմանացի Ռոդերիկ Զայդեմբերգը հանդես է եկել համաշխարհային պատմության իր փիլիսոփայությամբ, տալով իր գրքին մի «օրիգինալ» վերնագիր՝ «Հետպատմական մարդը»։ Ինչի՞ց է սկսել մարդկությունը իր պատմական ճանապարհը, ի՞նչ էտապներ է անցել, ի՞նչ է նրան սպասում ապագայում—ահա թե ինչ հարցերի է հեղինակը փորձում պատասխանել։ Ըստ նրա տեսության, որտեղ հավակնություն կա որոշելու անցյալի, ներկայի և ապագայի կապը, մարդկային հասարակությունը իր զարգացման մեջ անցել է երեք դարաշրջան.

1) նախապատմական դարաշրջան. այստեղ մարդկանց գործունեությունը և սոցիալական կապերը պայմանավորված են եղել նրանց բնազդներով.

2) անցման դարաշրջան, այսինքն՝ բուն պատմական դարաշրջան. սրա համար բնորոշ են կոնֆլիկտներն ու դինամիկ փոփոխությունները։ Այս սոցիոլոգը, գլխի վրա շուռ տալով պատմության իրական պրոցեսը, այդ կոնֆլիկտներն ու փոփոխությունները կապում է գիտակցության հետ, այսինքն՝ գիտակցության և բնազդի միջև տեղի ունեցող պայքարի հետ.

3) Հետպատմական դարաշրջան, որի մասին հեղինակը մի շարք անհիմն. մտացածին հիպոթեզներ ու դուշակություններ է անում։ Այստեղ, մի կողմից, ասում է նա, պետք է իշխեն բանականությունը, գիտությունը, իսկ մյուս կողմից՝ իր սեփական հակասությունների հետևանքով այստեղ պետք է տեղի ունենա վերադարձ դեպի առաջին ստադիան, շրջապտույտը պիտի կրկնվի։ Հավիտենական վերադարձ դեպի անցյալը և ոչ թե հասարակական առաջադիմություն—ահա այդ կոնցեպցիայի իմաստը։ Եվ հեղինակն ավարտում է իր երկը այն եզրակացությամբ, թե քաղաքակրթությունը կործանումից փրկելու համար չպետք է ձեռք տալ կապիտալիստական հասարակարգին, այլ պետք է դանդաղեցնել քաղաքակրթությունն, արտադրողական ուժերի զարգացումը։ Բանից պարզվում է, որ ամբողջ չարիքի աղբյուրը մեքենաներն են, գիտությունը, տեխնիկան։ Այս մտայնությունը շատ բնորոշ է իմպերիալիզմի մայրամուտի գաղափարախոսներին. նրանցից շատ շատերը բացահայտորեն դուրս են գալիս գիտության ու տեխնիկայի դեմ։

Ահա վերոհիշյալ կոնցեպցիայի մի վարիանտ ևս։ Գերմանական տնտեսագետ Էռնեստ Վագեմանը նույնպես մարդկության ապագայի մասին դեղատոմս տալու հավակնություն ունի։ Նա իր գիրքը այդպես էլ վերնագրել է «Աշխարհի ապագան»։ Պատասխանելու համար այն հարցին, թե ով պետք է իշխի ապագայում աշխարհի վրա (այսպես է կոչվում գրքի ենթավերնագիրը), նա փորձում է պատկերել մարդկության պատմական շարժման հիմնական փուլերը և կանխատեսել նրա ապագա զարգացման ուղղությունը։ Հասկանալի է, որ դա արվում է բուրժուական աշխարհայացքի դիրքերից։ Վագեմանի սխեմայի համաձայն, յուրաքանչյուր հասարակություն զարգանում է ալիքաձև։ վերելքի ալիքին հաջորդում է ճգնաժամի ալիքը, սրան՝ դեպրեսիայի ալիքը. այնուհետև գալիս է նոր աշխուժացում, վերելք և նորից ճգնաժամ։ Ակնհայտորեն պարզ է, որ հեղինակը կապիտալիստական էկոնոմիկայի ցիկլային

ընույթը դարձրել է համընդհանուր պատմական պրոցեսի սխեմա։ Բացի հիմնական փուլերից, նա փորձում է պատկերել հասարակական կյանքի տարբեր ոլորտների զարգացումը, վճռական նշանակություն տալով ազգաբնակության խտությանը և տեխնիկային։ Նկատենք, որ նրա գրվածքում էկլեկտիկորեն միահյուսվում են մի կողմից՝ առանձին հասարակական երևույթների ռեալիստական ըմբռնումը, մյուս կողմից՝ հակակոմունիստական շփոթ դատողությունները։ Նա բավական լրջամիտ առարկություններ է անում մալթուսականության, արդարացիորեն պնդելով, թե մեր մոլորակը ներկայումս ընդունակ է ապահովելու շորս անգամ ավելի շատ բնակչության կյանքը, քան այժմ նրա վրա ապրում է. մյուս կողմից էլ պատմության ընդհանուր ընթացքը որոշելիս նա գլխավոր գործոն է համարում դեմոգրաֆական ֆակտորը, այսինքն՝ բնակչության աճը։ Այնուհետև նա մի շարք շինծու դատողություններ է անում սոցիալիզմի զանազան տիպերի մասին[3]։

Դարիք չկա մանրամասնորեն քննարկել շրջապտուտային կոնցեպցիայի մյուս վարիանտները։ Դրանց մեջ շատ ընդհանուր բան կա։ Հիմնականն այն է, որ փորձ է արվում պատմությունը ներկայացնել որպես միակերպ ցիկլային պրոցես, բացարձակ ինդիվիդուալ, անկրկնելի քաղաքակրթություններով։ Բերենք մի նմուշ ևս։ Անգլիական պատմաբան և սոցիոլոգ Ստենլի Քեսոնը իր «Առաջադիմություն և կատաստրոֆա» գրքում յուրաքանչյուր հասարակություն ներկայացնում է որպես մի ինդիվիդուալ քաղաքակրթության տիպ, «էքսպերիմենտալ քաղաքակրթությունների լաբորատորիա»[4]։ Այդպիսին էր, նրա սխեմայի համաձայն, Հին Եգիպտոսի կուլտուրան արիստոկրատիայի գլխավորությամբ, հեթիթների կուլտուրան Փոքր Ասիայում, հին Կրետեի քաղաքակրթությունը։ Ընդ որում, այդ կուլտուրաների ծագման և կործանման պատճառը Քեսոնը համարում է աշխարհագրական ֆակտորը, բնական պայմանները։ Պատմության մասին նույն ոգով է դատողություններ անում նաև անգլիական սոցիոլոգ Գուչը։ Բելգիական պատմաբան Ժակ Պիրենը քննարկելով Հին Արևելքի պատմությունը, այն խզկում է ֆեոդալական ու բուրժուական հասարակություններից փոխառած կատեգորիաների շրջանակը։ Համաշխարհային պատմությունը նրա աշխատության մեջ ներկայացվում է իբրև կրկնությունների պրոցես՝ շահագործողական հասարակության շրջանակում[5]։ Պատմությունը որպես ինդիվիդուալ քաղաքակրթությունների գումար է պատկերում նաև ֆրանսիական հայտնի պատմաբան Մ. Կրուզեն։ «Քաղաքակրթությունների ընդհանուր պատմություն» իր խմբագրությամբ լույս տեսնող աշխատության առաջաբանում նա զարգացնում է հետևյալ դրույթը. քաղաքակրթություններից յուրաքանչյուրը այնքան անհատական ու անկրկնելի է, որ ոչ մի հիմք չի տալիս համեմատելու տարբեր քաղաքակրթությունները և նրանց միջև հաստատելու որևէ ընդհանուր օրինաչափություն։ Հետևաբար, այստեղ ևս հասարակության զարգացման մեջ որևէ օրինաչափության առկայության ժխտումը ծառայեցվում է ընդհանրապես հասարակական առաջադիմության և կոմունիզմի գաղափարը մերժելուն։

Անկասկած, հասարակության շրջապտուտային կոնցեպցիայի, «լոկալ քաղաքակրթությունների» տեսության ամենաճանաչված հեղինակությունը բուր-

[3] Տե՛ս E. Wagemann, Welt von Morgen, Düsseldorf, 1953, էջ 147 և այլ։
[4] St. Casson, Progress and Catastrophe, 1937, էջ 114։
[5] Տե՛ս Ж. Пиррен, Всемирная история, 1944, էջ 9։

ժուական աշխարհում համարվում է անգլիական պատմաբան և սոցիոլոգ Արնոլդ Թոյնբին։ Ուստի և մի կողմ թողնելով այդ կոնցեպցիայի շատ այլ ներկայացուցիչների հայացքների քննարկումը, մենք մի քիչ հանգամանորեն կծանրանանք Թոյնբիի պատմափիլիսոփայության վրա։

Միջազգային սոցիոլոգիական III կոնգրեսում (1956 թ., Ամստերդամ) բուրժուական սոցիոլոգները կրկնում էին այն միտքը, թե ներկայումս պատմության ցիկլային զարգացման տեսության երեք խոշոր ներկայացուցիչներ կան՝ Շպենգլեր, Սորոկին, Թոյնբի։ Թոյնբին հայտարարված է մեր ժամանակների մեծագույն պատմաբանը, իբր թե պատմագիտության նոր ըմբռնման հիմնադիրը։ Նրան համեմատում են Կոպերնիկոսի, Գալիլեյի, Դարվինի հետ։ Ա. Թոյնբիի «Պատմության հետազոտություն» բազմահատոր աշխատությունը՝ համարվում է համաշխարհային պատմության ունիվերսալ սինթեզ, պատմագիտության բարձրագույն նվաճում։ Պատմական նյութով և շոշափված պրոբլեմներով խայտաբղետ այս աշխատությունը, Թոյնբիի քննադատներից մեկի արտահայտությամբ, համաշխարհային պատմության հիմնական պրոցեսների մի վիթխարի սինթեզ է։ Մկների համար կատվից ուժեղ գազան չկա։ Թոյնբիից զորեղ պատմաբան չկա։ Մինչդեռ նրա աշխատությունը հիմնված է ամբողջապես իդեալիստական, ավելին՝ թեոլոգիական աշխարհայացքի վրա և տոգորված է ռեակցիոն քաղաքական եզրակացություններով։ Ինչպես ցույց են տալիս պրոգրեսիվ պատմաբաններն ու փիլիսոփաները, Թոյնբիի սիստեմում չկա ոչ իրական պատմական պրոցեսի քաղաքակրթության պատմության դիտական, օբյեկտիվ անալիզը, ոչ էլ անցյալի, ներկայի ու ապագայի ճշմարտացի պատկերը։ Առանձին ռացիոնալ մտքեր և մի շարք փաստական տվյալներ այստեղ շաղախված են արհեստական կառուցումների ու կեղծ եզրակացությունների հետ։ Հեղինակի թշնամանքը մարքսիզմ-լենինիզմի և սոցիալիզմի հանդեպ հանգեցրել են այն բանին, որ նրա բազմահատոր աշխատությունը և բազմաթիվ հոդվածները ավարտվում են եզրակացություններով, որոնք ուղղված են հասարակության առաջադիմական զարգացման դեմ և տոգորված են ամբողջ մարդկային քաղաքակրթության կործանման վերաբերյալ մռայլ դուշակություններով։

Ա. Թոյնբիի՝ «լոկալ քաղաքակրթությունների» տեսությունը հիմնականում հանդում է հետևյալ մտքին։ Կարծես թե շարունակելով Շպենգլերի դատողությունների թելը, բայց ավելի ընդարձակ, նա փորձում է ամբողջ մարդկային պատմությունը ներկայացնել մեկուսացած, ներփակ քաղաքակրթությունների հաջորդափոխման ձևով, որոնց հիմքը կազմում են քրիստոնեության դաղափարները և որոնք ունեն ծագման ու կործանման հիմնական փուլերի նմանություն։ Իմպերիալիզմի մյուս փիլիսոփաների նման նա մարգարեություններ է անում քաղաքակրթության կործանմանն սպառնացող վտանգի մասին։ Իրեն ներկայացնելով որպես Կոպեռնիկոս՝ պատմության մեջ, Թոյնբին քննադատության է ենթարկում, այսպես կոչված, «եվրոպոցենտրիզմը» և գտնում է, որ դրա հիման վրա կառուցված հին պատմագրությունը ճիշտ չի եղել, որովհետև, ըստ այդ պատմագրության, համաշխարհային քաղաքակրթության միակ կենտրոնը և գլխավոր առանցքը Արևմտյան Եվրոպան է, ուրիշ կենտրոններ

6 Այժմ լույս է տեսել դրա XII հատորը, որտեղ Թոյնբին պատասխանում է իր քննադատներին։

մերժվել են։ Ըստ Թոյնբիի, պատմությունը մի կապակցված առաջընթաց պրոցես չէ, այլ մեկուսացած քաղաքակրթությունների հավաքածու, որոնք կարծես թե զուգահեռաբար ծագում, աճում, քայքայվում և կործանվում են։ Յուրաքանչյուր քաղաքակրթություն կրկնում է նույն փուլերը։ Այսպիսով, պատմության մեջ կապակցող թել չկա, կան զուգահեռ կուլտուրաներ։ «Ի՞նչ եմ ես փորձել անել» հոդվածում Թոյնբին պատկերավոր կերպով այսպես է ձևակերպել իր հիմնական դրույթներից մեկը. «Մեր նոր գիտության լույսի տակ մենք ստիպված ենք դեն նետել այդ սխեման («եվրոպոցենտրիզմը»—Հ. Ա.), ինչպես մեր նախորդները դեն են նետել Բոսսյուէտի սխեման... Մեզ հայտնի քաղաքակրթությունների պատմությունները չեն կարող համարվել մի շարք, որը վերընթաց կերպով տանեք դեպի ներկայումս գոյություն ունեցող քաղաքակրթություններից մեկը կամ այժմ գոյություն ունեցող ազգություններից մեկը։ Այդ սխեմայի փոխարեն, որը պատմությունը ներկայացնում է մեկ ծառարնի ձևով, մենք պետք է մեզ համար կառուցենք մի սխեմա, որը ներկայացնում է մի ծառ, որի վրա քաղաքակրթությունները ծագում են ճյուղերի նման կողք-կողքի»[7]։

Եվ այսպես, պատմությունը միասնական պրոցես չէ, որը ընթանար առաջադիմության ընդհանուր օրինաչափությամբ։ Այն ներկայացնում է բարձրացող և կործանվող կուլտուրաների կղզյակներ. այդպիսի կուլտուրաներ կամ քաղաքակրթություններ Թոյնբին հաշվում է երկու տասնյակից ավելի։ Եղել են կուլտուրաներ, որոնք դեռ չզարգացած կործանվել են (Թոյնբին դրանք համարում է արգասիվ կուլտուրաներ)։ Եղել են կուլտուրաներ, որոնք իրենց ապրել և կործանվել են։ Դրանք բոլորն էլ ինքնամփոփ են. նրանց մեջ ընդհանուր է եղել միայն այն, որ բիոլոգիական էակների նման նրանք ծագել, աճել, քայքայվել ու կործանվել են։ Բայց այդ արտաքին նմանությամբ և որոշ արտաքին փոխազդեցությամբ էլ նրանց ընդհանրությունը սպառվում է։ Մի քաղաքակրթություն հաղորդակից չէ մյուս քաղաքակրթությանը. ժողովուրդների պատմության օրենքների ընդհանրությունը ժխտվում է։ Փորձելով ըմբռնել պատմության, քաղաքակրթության կամ կուլտուրայի շարժիչ ուժերը, Թոյնբին ինչպես իր ամբողջ սխեմայում, այնպես էլ պատմության շարժիչ ուժերի հարցում կրկնում է հին, ռեակցիոն արիստոկրատական ու բուրժուական թեզը, ըստ որի պատմության մեջ գործում են երկու ուժեր՝ «ստեղծագործական փոքրամասնություն» և պասսիվ կերպով նրանց ենթարկվող ժողովրդական մասսաներ, որոնց համար ստեղծագործությունը բնորոշ չէ։ Այդ փիլիսոփայության համաձայն, քաղաքակրթության առաջադիմությունը ապահովվում է այն ժամանակ միայն, քանի դեռ սոցիալական ներդաշնակություն կա «ստեղծագործող փոքրամասնության» և «անստեղծագործ մեծամասնության» միջև, երբ ժողովուրդը անտրտունջ հանդուրժում է տիրող դասակարգի իշխանությունը։ Սակայն այդ երկար չի տևում. շուտով հավասարակշռությունը խախտվում է, ներդաշնակությունը ճեղքեր է տալիս և «ստեղծագործող փոքրամասնությունը» անզոր է դառնում մասսային ենթարկելու իրեն։ Մասսան ըմբոստանում է նրա դեմ, նա դիմում է բռնության, ծագում են ռևոլյուցիաներ, պատերազմներ, դասակարգային պայքար։ Սոցիալական ճգնաժամ է ստեղծվում, վրա է հասնում քաղաքակրթության քայքայումն ու անկումը։ Մի քաղաքակրթության անկումը

[7] A. Toynbee, Was ich zu tun versuche?, „Diogenes", № 13, 1956, էջ 12։

նշանակում է ցիկլի վերջ և նոր շրջապտույտի սկիզբ, այսինքն՝ վերադարձ դեպի ելակետ։ Քանի որ յուրաքանչյուր քաղաքակրթություն իր բոլոր տարրերով անկրկնելի, խիստ անհատական երևույթ է, ուստի տարրերը քաղաքակրթությունների փոխադարձ ազդեցությունը, ըստ էության, բացառվում է. հետևաբար պատմական պրոցեսի կապն ու հաջորդականությունը, այսինքն՝ հասարակության առաջադիմական զարգացման պրոցեսը մի կողմ է նետվում։

Որ սխեմայի թելադրանքով Թոյնբին իր պատմափիլիսոփայությունն ամփոփում է այն եզրակացությամբ, թե ժամանակակից կապիտալիզմով ավարտվում է մարդկային պատմության վերջին շրջապտույտը և մարգարեություններ է անում ժամանակակից քաղաքակրթության կործանման վերահաս վտանգի մասին։ Շրջապտույտն ապրում է իր քայքայման նախօրյակը. «պասսիվ» մասսաները, պրոլետարիատը, այլևս չի խոնարհվում տիրող «էլիտայի», ստեղծագործ փոքրամասնության առաջ. խախտված են նախկին ներդաշնակ հարաբերությունները. բոնությունը, պատերազմները, ռևոլյուցիաները խարխլում են քաղաքակրթության հիմքերը, նախապատրաստելով կործանում և վերադարձ դեպի ցիկլի ելակետը։ Կոմունիզմի և առաջադիմության այլ հակառակորդների նման Թոյնբին ռևոլյուցիան համարում է քաոսի և կործանման գործոն, որը անընդունակ է հասարակությունը դուրս բերելու ճգնաժամային վիճակից։ Այսպիսով, Թոյնբին, մի շարք սոցիոլոգների բնութագրմամբ, հանդես է գալիս որպես հետպատերազմյան Շպենգլեր։ Ասենք, անգլիական պատմաբանը, զգալով կապիտալիզմի անխուսափելի մայրամուտը և այն ներկայացնելով որպես ամբողջ մարդկության կուլտուրայի կործանում, այնուամենայնիվ ելք է որոնում։ Նա բարեհոգությամբ դեղատոմս է տալիս, թե ինչպես պետք է խուսափել կատաստրոֆիկ կործանումից։ Այդ ելքը նա որոնում է կրոնի, քրիստոնեության համայնապարփակ տիրապետություն, իսկ քաղաքական տեսակետից՝ արևմտյան իմպերիալիստների համաշխարհային տիրապետություն հաստատելու մեջ՝ ամերիկյան մոնոպոլիստների գլխավորությամբ։ Նրա դատողությունն այս է. ժամանակակից քաղաքակրթությունը բաժանվում է հինգ տիպերի, այն է՝ արևմտա-քրիստոնեական, արևելա-քրիստոնեական (այստեղ նա մտցնում է նաև Սովետական Միությունը), հեռավոր արևելյան (Չինաստան. Կորեա. Ճապոնիա), հնդկական և իսլամական քաղաքակրթություններ։ Բանից դուրս է գալիս, որ այդ քաղաքակրթություններից կենսունակ է միայն արևմտյան քաղաքակրթությունը, այսինքն՝ ամերիկա-եվրոպական իմպերիալիզմը, իսկ մյուսները ապագա չունեն և քայքայվելու են։ Արևմտյան քաղաքակրթությունը կարող է խուսափել կործանումից, եթե ամբողջ աշխարհում տարածվի քրիստոնեական կրոնը, ստեղծվի ունիվերսալ եկեղեցի և ԱՄՆ-ի գլխավորությամբ՝ համաշխարհային կայսրություն։ Այս թեզը հիմնավորելու համար Թոյնբին հորինում է մի շինծու սխեմա, ըստ որի պատմական անցյալում Արևմուտքն է ագրեսիվ քաղաքականություն վարել Արևելքի նկատմամբ, որպեսզի ապացուցի, թե այժմ Արևելքից է սպասվում ագրեսիայի վտանգը (արևելք ասելով նա գլխավորապես նկատի ունի Սովետական Միությունը և Չինաստանը)։ Նրա հիմնական քաղաքական եզրակացությունն այն է, որ արևմտյան իմպերիալիստները պետք է համախմբվեն սոցիալիզմի դեմ՝ քաղաքակրթությունը կործանումից պաշտպանելու համար։

Այս է համաոստակի Առնոլդ Թոյնբիի պատմափիլիսոփայության հիմնական բովանդակությունը, այսպես ասած, սյուժետային գիծը։

Թոյնբիի կոնցեպցիայի մի շարք արատները նշվել են արդեն բուրժուական սոցիոլոգների կողմից, որոնց չի կարելի մեղադրել կոմունիզմի նկատմամբ ունեցած համակրանքի մեջ և որոնք ընդհանուր աշխարհայացքային և քաղաքական հարցերում հիմնականում կանգնած են նույն դիրքերում, ինչ Թոյնբին։ Ահագին քննադատական գրականություն է ստեղծվել։ Այնտեղ նշվում է, օրինակ, որ «Պատմության հետազոտության» հեղինակը տեղյակ չէ քաղաքակրթության պատմության շատ փաստերին կամ աղավաղում է այդ փաստերը՝ հարմարեցնելով իր սխեմային, և անում է եզրակացություններ, որոնք դրանցից չեն բխում։ Քննադատները մատնանշում են, որ հրաժարվելով «եվրոպոցենտրիզմից», Թոյնբին ընկել է հակառակ ծայրահեղության մեջ՝ քաղաքակրթությունները քննելով մեկուսացած, կղզիացած, իրենց փոխադարձ ազդեցությունից դուրս, որպես զուգահեռ գծեր։ Նշվում է Թոյնբիի հայացքների իռացիոնալիստական բնույթը, սոցիալական հոռետեսությունը։ Պետք է ասել, որ մի շարք բուրժուական լրջամիտ սոցիոլոգներ ակամա ցույց են տվել շրջապտուտային կոնցեպցիայի արատները։ Իհարկե, բուրժուական մտածողները չէին կարող վեր հանել այդ կոնցեպցիայի դասակարգային էությունը և հասարակական ռեակցիոն դերը։ Ոմանք նշում են, որ Թոյնբիի բազմահատորանոց աշխատությունը խոշոր գիտական արժեք չի ներկայացնում։

Պետք է ասել, որ Թոյնբիի սիստեմը քննադատության է ենթարկվում ամենատարբեր դիրքերից։ Բացի ռեալիստ մտածողներից, խիստ քննադատությամբ հանդես են եկել նաև ծայրահեղ ռեակցիոներներ։ Դրա օրինակն է ամերիկյան կաթոլիկ պատմաբան Դուգլաս Ջերոլդի բրոշյուրը, որը վերնագրված է՝ «Սուտը Արևմուտքի մասին» (Նյու-Յորք, 1955)։ Պարզվում է, որ Թոյնբիի հակապրոգրեսիստական, հակակոմունիստական մտորումները չեն բավարարում ամերիկյան պատմաբանին, նրան թվում են չափազանց լիբերալ, մեղմ։ Եվ մարտնչող կաթոլիկը հարձակվում է անգլիական պատմաբանի վրա պամֆլետային տիպի մի բրոշյուրով։ Թոյնբիին անվանելով մեր ժամանակների Շպենգլեր, Ջերոլդը պնդում է, որ նրա գուշակությունները՝ մոտ ապագայում արևմտյան բուրժուական քաղաքակրթությանը կործանում սպառնացող վտանգի մասին, փիլիսոփայական կապիտուլյացիա է կոմունիզմի հանդեպ, արևմտյան քաղաքակրթության վարկաբեկում, շպենգլերյան «Եվրոպայի մայրամուտի» ռեցիդիվ։ Դուգլասն իր հերթին կեղծելով պատմությունը, ամեն կերպ ջատագովում է իմպերիալիզմն ու նրա կուլտուրան։

Պատմության շրջապտուտային կոնցեպցիաները խոր և սպառիչ քննադատության են ենթարկվել առաջավոր մարքսիստ փիլիսոփաների, պատմաբանների և սոցիոլոգների կողմից։ Առանձնապես պետք է նշել սովետական մի շարք հեղինակների քննադատական աշխատությունները, որոնք հարուստ փաստական նյութի հիման վրա համոզեցուցիչ կերպով բացահայտել են ցիկլային կառուցվածքների իդեալիստական, սուբյեկտիվ բնույթը, վեր հանել դրանց ռեակցիոն էությունը որպես իմպերիալիզմի գաղափարական զենք։ Մարքսիստները ցույց տվեցին, որ ձևականորեն առարկելով «եվրոպոցենտրիստական» պատմաբանությանը, Թոյնբին փաստորեն հանդես է գալիս նույն արևմտյան իմպերիալիզմի ջատագովի դերում՝ մի այլ ձևով։ Մարքսիզմը հիմնավորեց այն թեզը, որ քաղաքակրթության պատմությունը, և ամբողջ պատմությունը, մեկուսացած կղզիների հավաքածու չէ, այլ ծագող և հաջորդաբար զարգացող առաջադիմական պրոցես։ Պատմագիտությունը, հնագիտությունը

ազգագրությունը, մշակույթի պատմությունը աներկրա կերպով ապացուցում են, որ հակառակ «լոկալ կուլտուրաների» կոնցեպցիայի, ոչ մի քաղաքակրթություն չի ծագում և զարգանում բացարձակ մեկուսացած վիճակով։ Թոյնբիի քննադատներից մեկը՝ Հայնե-Լելդերնը ապացուցում է, որ հենց հին աշխարհի, այդ թվում հին Ամերիկայի քաղաքակրթություններից ոչ մեկը չի ծագել առանձնակի։ Դիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի, հողի մշակման, նավաշինության, մի խոսքով ամբողջ մշակույթի պատմությունը լիովին հաստատում է այդ գրույթը։ Հին արևելյան մշակույթի շատ տարրեր ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր, այս կամ այն ձևով մտել են անտիկ, իսկ դրա միջոցով՝ նոր ժամանակների մշակույթի մեջ։ Ամփոփելով իր ժամանակվա մշակույթի պատմության փաստերը և բնութագրելով Եվրոպայի քաղաքակրթության առաջադիմությունը միջնադարի վերջում, Ֆր. Էնգելսը նշում է մի շարք տեխնիկական հայտնագործություններ, որոնցից շատերը ներմուծված են Արևելքից, ինչպես, օրինակ՝ վառոդը, հանրահաշիվը, պերգամենտը, մագնիսային ասեղը, հողի մշակման շատ եղանակներ, եգիպտացորենն ու կարտոֆիլը, շերամարուծությունը և շատ ուրիշ հայտնագործություններ, որոնք Եվրոպա են մտել Չինաստանից, Հնդկաստանից, Միջին Ասիայից, Անդրկովկասից, արևմտյան քաղաքակրթությանը հաղորդելով զարգացման նոր թափ և արագ տեմպեր։ Շնորհիվ այդ հաջորդականության (преемственность) և առաջ մղվելով հասարակության պահանջներով ու շահերով և աշխատավորների փորձով, քաղաքակրթության պատմությունը շարունակ աճում ու հարստանում է, գնալով ցածրից դեպի բարձրը և ավելի ու ավելի բարդանալով։ Հասարակության ամբողջ պատմության, քաղաքակրթության այդ վերընթաց զարգացումն էլ հենց կազմում է հասարակության առաջադիմության օբյեկտիվ օրենքը։ Կոմունիզմը հասարակական այդ պրոցեսի նոր և բարձրագույն ձևն է։

Սակայն, հանուն լիակատար ճշմարտության, անհրաժեշտ է ընդգծել հասարակության առաջադիմության օրենքի դրսևորման մի շատ կարևոր առանձնահատկություն, առանց որի պատմությունը կարող է ադավաղվել, միակողմանի ու գռեհկացված նկարագրվել։

Այդ առանձնահատկությունն այն է, որ ընդունելով կուլտուրական արժեքների հաջորդականության, փոխանցման դերը պատմության մեջ, մենք միևնույն ժամանակ չպիտի մոռանանք, որ առաջադիմությունը բոլորովին էլ ուղիղ երկրաչափական գիծ չէ։ Համաշխարհային պատմությունը միասնական օրինաչափությունների պրոցես լինելով, միաժամանակ խիստ հակասական պրոցես է։ Պատմությունը, սովորեցնում էր Լենինը, շատ ավելի հարուստ է բովանդակությամբ, ավելի խորամանկ, բազմաձև, խճճված, քան կարելի է պատկերել զանազան տեսական սիստեմներում, սխեմաներում, ծրագրերում։ Առաջադիմությունը (պրոցեսը), անշուշտ, հասարակության զարգացման օրենքն է, սակայն, այդ ընդհանուր օրենքը տարբեր դարաշրջաններում, տարբեր էտապներում, տարբեր ժողովուրդների մոտ շատ զիգզագներ ու խոտորումներ է դրսևորում, լրացնելով ու բարդացնելով ընդհանուր պրոցեսը։ Հատկապես հակասական ու հաճախ այլանդակ ձևով է դրսևորվում հասարակական պրոցեսը անտագոնիստական, շահագործողական հասարակական ֆորմացիաներում։ Կապիտալիզմի նկատմամբ այս բանը ցույց է տրված սպառիչ կերպով. այստեղ հասարակական կյանքի մի ոլորտի առաջադիմությունը հաճախ զուգորդվել է մյուս ոլորտների մեջ տեղի ունեցող հետադարձ շար-

ժումների, նույնիսկ առանձին կուլտուրաների կործանման հետ։ Հայտնի է, որ, օրինակ, տեխնիկայի ու գիտության բարձր զարգացման հետ միասին կապիտալիզմը կործանել է շատ ժողովուրդներ, ավերել նրանց կուլտուրան, ստեղծել գաղութային ժողովուրդների համար աղքատության, սովի ու խավարի վիճակ։

Իրենց պնդումների մեջ «լոկալ կուլտուրաների» տեսության հեղինակները ուղղակի անհեթեթության մեջ են ընկնում, ղեկավարվելով, այսպես կոչված, անալոգիայի մեթոդով։ Դրանց սխեմաների համաձայն անալոգներ են դուրս գալիս ժամանակակից աշխարհը և հունա-հռոմեական աշխարհը, փարավոնների ժամանակների Եգիպտոսը և Սովետական Միությունը, կամ Սովետական Միությունը և Սելևկյանների կայսրությունը, Լենինը ժամանակակից է դուրս գալիս հին աշխարհի կայսրներին և այլն, և այլն։ Այսպիսով, իրար են խառնվում տարբեր հասարակություններ, քաղաքակրթություններ, տարբեր տիպի հարաբերություններ։

Արևմտյան իմպերիալիստների միություն ստեղծելու կոչ անելով ընդդեմ արևելյան ժողովուրդների, Թոյնբին վերածնում է հին գաղութարարական գաղափարախոսությունը Արևմուտքի և Արևելքի իբր թե հավիտենական թշնամության մասին։ Իր «Ասախոսություններում» Թոյնբին արևմտյան քաղաքակրթությունը կոմունիզմից պաշտպանելու քողի տակ փորձում է արդարացնել իմպերիալիստների ագրեսիվ բլոկները։ Նա առաջ է քաշում բուրժուական սովորական սուտը սոցիալիզմի դեմ, որը, իբր թե, քայքայիչ սիստեմ է։ Այժմ կոմունիստական քաղաքակրթության ծավալուն ստեղծման մեր դարաշրջանում, քաղաքակրթություն, որը ներկայացնում է սոցիալական պրոգրեսի բարձրագույն ձևը, հանդիսանալով առաջավոր մարդկության դարավոր երազանքի իրագործումը, բուրժուական սուտը կոմունիզմի վերաբերյալ հատկապես ծիծաղելի է։ Իմպերիալիզմի գաղափարախոսները զրպարտում են ոչ միայն սոցիալիզմը, այլև իրենց ազատագրության համար պայքարող բոլոր ժողովուրդներին, Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի սոցիալական ու ազգային ռևոլյուցիոն շարժումը։ Նրանք այդ անում են զանազան ձևերով. մերթ կոպիտ, ցինիկ ձևով, բացահայտ ռասիստական, մերթ քողարկված, փոխելով արտաքին զգեստը։ Թոյնբին գիմում է այս երկրորդ եղանակին։ Մերթընդմերթ նա կոկետություն է անում գաղութային ժողովուրդների ազատագրական շարժման հանդեպ, ընդունում է դրա դրական նշանակությունը որոշ պայմաններում, որպեսզի իսկույն ևթ վարկաբեկի այդ շարժումները, վտանգավոր հայտարարի դրանք արևմտյան քաղաքակրթության համար, նույնիսկ անվանի այդ շարժումը ագրեսիվ, որն իբր թե խանգարում է միասնական համաշխարհային տնտեսություն ստեղծելու գործին։ Բուրժուական պատմաբանի և նրա հետևողների այս ռեակցիոն բարբաջանքը լիովին համապատասխանում է ամերիկյան, անգլիական, ֆրանսիական, արևմտա-գերմանական, բելգիական, պորտուգալական գաղութարարների շահերին։ Սրանք շարունակ պնդում են, թե Աֆրիկայի, Ասիայի, Լատինական Ամերիկայի ժողովուրդները չեն հասունացել ինքնուրույն պետականություն կազմելու համար և կարիք ունեն, որպեսզի իրենց ղեկավարեն, քաղաքակրթություն սովորեցնեն իմպերիալիստական զավթիչները։

Այսպիսով, հասարակական շրջապտույտի, «լոկալ կուլտուրաների» կոնցեպցիան չի մնում աբստրակտ տեսության շրջանակներում. այն թափանցում է անմիջական քաղաքական ոլորտը, հանդիսանալով գաղափարական զենք

իմպերիալիստական պետությունների ագրեսիվ քաղաքականությունն արդարացնելու և սրբագործելու համար։ Այդ կոնցեպցիաների վրա մշակվում են իմպերիալիստական պետությունների շահերից բխող ծրագրեր, պլաններ, քաղաքականություն։ Այդ բոլորն ուղղված են հասարակական առաջադիմության, դեմոկրատիայի, սոցիալիզմի դեմ։ Թոյնբին, օրինակ, իր ամբողջ պատմափիլիսոփայությունը այնպես է կառուցել, որ հիմնավորի ամերիկյան ու անգլիական իմպերիալիստների միլիտարիստական ու էքսպանսիոնիստական քաղաքականությունը։ Նա փորձում է իր ընթերցողներին այն քաղաքական եզրակացությանը հանգեցնել, թե համաշխարհային տիրապետությունը պետք է պատկանի ԱՄՆ-ին։ Նրա համար հատկապես ատելի է ժողովուրդների ազգային սուվերենիտետը։ Իմպերիալիզմի շատ գործիչներ, սոցիոլոգներ և քաղաքագետներ այդ սիստեմի համաշխարհային տիրապետությունը հաստատելու անհրաժեշտությունը հիմնավորում են Թոյնբիի պատմափիլիսոփայությամբ։ Մեր ժամանակներում, երբ պատմության ընթացքի որոշող գործոնը դառնում է սոցիալիզմի համաշխարհային սիստեմը, անդուսպ կերպով փլուզվում է իմպերիալիզմի գաղութային սիստեմը, ընդ որում բուրժուազիան անզոր է գտնվում դիմադրելու այդ պրոցեսներին, իսկ մյուս կողմից սոցիալիզմի լագերը իրագործում է տարբեր սոցիալական սիստեմների գոյակցությունը։ Քաղաքականությունը Այսպիսի պայմաններում Թոյնբիի և մյուսների դատողությունները լոկալ, անհատ ու մեկուսացած քաղաքակրթությունների, ազգային սուվերենության անընդունելիության, համաշխարհային պատերազմի անխուսափելիության վերաբերյալ դրսևորում են իրենց խոր հակաժողովրդականությունը, թշնամանքը աշխարհի բոլոր ժողովուրդների, սոցիալական առաջադիմության նկատմամբ։

Այս է հասարակական առաջադիմության հակառակորդների պատմափիլիսոփայության սոցիալ-քաղաքական իմաստը։ Մեր համառոտ ակնարկից երևում է, որ Թոյնբիի և առհասարակ հասարակության շրջապտուտային կոնցեպցիաների տեսական արժեքը և քաղաքական եզրակացությունները հավասարապես հակասում են և՛ գիտական պատմաբանությանը, և՛ սոցիալական պրոգրեսին։ Պատմության իբր թե նոր, ամբողջական ըմբռնման հավակնություն ունենալով, Թոյնբին հրամցնում է ընթերցողին այնպիսի մի խառնաշփոթություն, ըստ որի պատմության մեջ չկա ոչ հաջորդականություն, ոչ ընդհանրություն, ոչ պրոգրեսիվ զարգացման օրենք, և վերջացնում է իմպերիալիզմի գատագովությամբ։ Շատ ցայտուն է բնութագրել Թոյնբիի կոնցեպցիայի էությունը սովետական հանգուցյալ պատմաբան Ե. Կոսմինսկին. «Թոյնբիի օպուսը պատմություն չէ, գիտություն չէ, այլ աստվածաբանական-մետաֆիզիկական ֆանտազիա երկրագնդի մարդկության ճակատագրի շուրջը, ֆանտազիա, որը ծանրաբեռնված է անհավանական քանակի անուններով, սովանումներով, տարեթվերով, ցիտատներով, լրացումներով, ծանոթագրություններով, էքսկուրսներով, չստուգված փաստերով, անհիմն հիպոթեզներով, պատմական անեկդոտներով, միստիկական տեսիլքներով, մոդեռնիստական բառերով. ֆանտազիա, որը տեղ-տեղ հետաքրքրաշարժ է, բայց գիտության տեսակետից միանգամայն անպտուղ»[8]։

---

[8] Е. А. Косминский, Историософия Арнольда Тойнби, «Вопросы истории», 1957, № 1, էջ 138

Պատմության «հավիտենական վերադարձի», «լոկալ կուլտուրաների», շրջապտուտային պատկերացումը բարդ և բազմերանգ պատմական պրոցեսի առանձին մոմենտների, գծերի, երանգների միակողմանի, այլանդակ պատկերումն է, մի պատկերում, որը բացարձակապես անհամատեղելի է հասարակական առաջադիմության գաղափարի հետ։ Այս նկատել են ոչ միայն մարքսիստները, այլև անցյալի ու ներկայի ոչ-մարքսիստ լուրջ փիլիսոփաներ, սոցիոլոգներ, տնտեսագետներ, նույնիսկ բնագետներ։ Ռուս ականավոր սոցիոլոգ Մ. Կովալևսկին դեռ կես դար սրանից առաջ նկատել է, որ հասարակական առաջադիմության կողմնակիցները չեն կարող ընդունել շրջապտուտային գաղափարը։ «Առաջադիմության գաղափարը,—գրում է նա,—անհամակերպելի է արդեն իրենց դարն ապրած կարգերի վերածնության անհրաժեշտության և արդեն անցած ուղուն վերադառնալու հայացքի հետ»[9]։

Ֆրանսիական հայտնի պրոգրեսիվ կոսմոգոնիստ Պ. Լաբերենը քննադատարար շարադրելով զանազան իդեալիստական կոսմոգոնիական տեսություններ, մասնավորապես նշում է «հավիտենական վերադարձի» կոնցեպցիայի ոչ միայն սխալ, այլև վտանգավոր լինելը։ «Հավիտենական վերադարձի հիպոթեզը պատկանում է առավել հին, և անկասկած, առավել վտանգավոր հիպոթեզների թվին»[10]։

Բուլգարական հրապարակախոս, «Հայրենական ճակատ» թերթի գլխավոր խմբագիր Ի. Պյուլովսկին լավ է հեգնել, օրինակ, Թոյնբիին և նրա հակապրոգրեսիստական հայացքները. «Վերջերս իմ ձեռքն ընկան անգլիական պրոֆեսոր Թոյնբիի գրվածքները։ Նա բնավ էլ Ֆաուստ չէ, անցյալ ժամանակների այդ գիտնական-պատմաբանը, որը փորփրում է քաղաքակրթությունների նկուղները՝ ապացուցելու համար այն թեզը, թե մարդկությունը իբր թե ոչ մի առաջադիմություն չի կատարում։ «Մարդիկ ի ծնե անհաջող կերպով գոփում են կախարդական շրջանում»[11]։

Հասարակության պատմության վերաբերյալ ցիկլային հայացքների վերականգնումը ևս մի նոր ցայտուն ապացույց է, որը ցույց է տալիս, որ բուրժուական միտքը իրոր խոր ճգնաժամ է ապրում, անզոր է բացատրելու անցյալը, մարդկության ժամանակակից շարժումը, նրա ապագան։ Պատմության այդ առաջընթացը խորապես և ճշմարիտ կերպով բացատրում է միայն մարքս-լենինյան պատմափիլիսոփայական սիստեմը, իր մեջ միացնելով երկու հիանալի առանձնահատկություններ՝ խոր գիտականություն և համարձակ հեղափոխականություն։ Մարքս-լենինյան մտքի վեհ փաստաթղթում՝ ՍՄԿՊ նոր Ծրագրում խոր ընդհանրացումներ են արված և արդիականության մեծ պրոցեսների հիման վրա կրկին հիմնավորված է գիտական պատմափիլիսոփայության այն դրույթը, որ համաշխարհային պատմությունը ընթանում է ոչ թե բառսարար և ոչ թե ցիկլերով կամ շրջապտույտներով, այլ հասարակական առաջադիմության օրյեկտիվ օրենքի համաձայն և որ մարդկության իսկական առաջադիմությունը կարող է ապահովված լինել միայն կոմունիզմի ուղիով։

---

[9] Максим Ковалевский, Социология, т. I, 1918, СПб, էջ 126։

[10] П. Лаберенн, Происхождение миров, М., 1957, էջ 221։

[11] П. Кьюловски, Утро грядущей эры, «Известия», 2 августа, 1961.

К КРИТИКЕ КОНЦЕПЦИИ ИСТОРИЧЕСКИХ КРУГОВОРОТОВ

Г. Г. АСЛАНЯН

(Резюме)

В современную эпоху с огромной силой проявляется величие марксизма-ленинизма, ставшего владыкой умов передового человечества, и вместе с тем глубокий кризис буржуазной идеологии, отражающий общий кризис мировой системы капитализма. Эта идеология оказалась бессильной объяснить величайшие процессы, связанные с закатом капитализма и утверждением коммунизма.

Кризис буржуазной идеологии, как в фокусе, отражен, в частности, в философии истории, ибо здесь речь идет о содержании и направлении хода всемирной истории, о связи прошлого, настоящего и будущего, о движущих силах исторического процесса. В наше время это означает бессилие буржуазной мысли раскрыть сущность и смысл таких эпохальных процессов, как превращение социализма в мировую систему и в решающий фактор общественного прогресса, распад колониальной системы империализма, возросшая роль народных масс, величайший технический переворот и т. д. Деградация, разброд, социальный пессимизм, неверие в силу человеческого разума (иррационализм) и в общественный прогресс — таковы некоторые черты кризиса буржуазной идеологии.

Выражается он в двух формах: антикоммунизм, т. е. систематическая беззастенчивая клевета по адресу социализма, политики коммунистических и рабочих партий, фальсификация марксизма-ленинизма и в то же время апологетические теории империализма, с одной стороны, а с другой — социальный пессимизм, нигилистические умонастроения, разглагольствования о неизбежности катастрофической гибели мировой цивилизации. На этой почве выдвигаются различные наукообразные концепции и схемы истории, противоречивые, часто взаимоопровергающие, которые противопоставляются марксистско-ленинской философии истории с целью дискредитировать идею общественного прогресса, а вместе с тем и идеалы коммунизма.

Одной из модных концепций подробного рода является теория исторических круговоротов (циклов). В статье дается сжатая критическая характеристика проявлений этой концепции у таких идеологических столпов империализма, как Ф. Ницше, Осв. Шпенглер, А. Тойнби и другие.

Несостоятельность всех этих теорий «вечного возврата», «локальных культур», «локальных цивилизаций» и т. п. показана уже многими прогрессивными социологами, историками и даже естествоиспытателями. Марксизм-ленинизм полностью разоблачает названные концепции. Ход истории представляет собой не случайное скопление событий, не круговорот, а объективно закономерный процесс, идущий по восходящей линии.